



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

 secretariat@mineconomy.am

 www.mineconomy.am

ԵՐԵՎԱՆ 2025



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Հիմնական հասկացություններ	4
Խնդիրները և նպատակը	6
ՀՀ-ում իրականացվող խոշոր ներդրումային ծրագրերի չափորոշիչներ	7
Պետական աջակցության (օժանդակության) ստանալու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերը	8
Ներդրումային ծրագրի իրականացման դեպքում իրավասու մարմին ներկայացվող փաստաթղթերը	10
Խոշոր ներդրումային ծրագրերին պետական աջակցության (օժանդակության) ձևերը	11
Խոշոր ներդրումային ծրագրերի հաշվետվության ներկայացման պայմանները	12
Ներդրողի պարտավորությունները և դրանց չկատարման դեպքում պատասխանատվության ձևերը	14



ՆԱԽԱԲԱՆ

Սույն ուղեցույցով (այսուհետ՝ Ուղեցույց) սահմանվում են խոշոր ներդրումային ծրագրերի հասկացությունները, խոշոր ներդրումային ծրագրերի շրջանակներում պետության կողմից տրամադրվող օժանդակությունները և նախանշվում են վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ պետական քաղաքականության ուղղությունները:

Հայաստանի Հանրապետությունը խթանում է խոշոր ներդրումների ներգրավումը, ինչը Հայաստանի Հանրապետության կառավարության ընդհանուր տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, որն ամրագրված է վերջինիս գործունեության ծրագրում:



ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԴՐՈՂ - Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատեր, որը Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, արժույթային այլ տեսակներով, շարժական ու անշարժ գույքով, Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակով ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություն, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, օտարերկրյա քաղաքացի, այլ երկրում հաշվառված անհատ ձեռնարկատեր, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում.



ՆԵՐԴՐՈՒՄ - գույքի ցանկացած տեսակ, ֆինանսական միջոցներ, մտավոր սեփականության արժեքներ, բաժնետոմսեր, որը ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ոլորտներում՝ շահույթի (եկամտի) ստացման նպատակով կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ներդրողի կողմից շահույթի ստացման նպատակով ձեռնարկատիրության գործունեության ոլորտում իրականացվող սույն հայեցակարգի պահանջներին բավարարող ծրագիր, որի իրականացման համար ներդրողի կողմից կատարվելու է ներդրում.

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ - պետական կառավարման համակարգի մարմին կամ տեղեկան ինքնակառավարման մարմին (համաձայնությամբ), որին կառավարության կողմից կվերապահվի ներդրումային ծրագրի իրագործման նպատակով պետական գործառույթների իրականացման լիազորություն.

ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ - պետական կառավարման համակարգի մարմին կամ տեղեկան ինքնակառավարման մարմին, որը պետական աջակցության տրամադրման շրջանակներում հանդես է գալիս որպես պայմանագրի կողմ:



ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

- Խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման համար պետության կողմից տրամադրվող օժանդակությունների / աջակցությունների համակարգային մոտեցումների բացակայությունը,
- Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ խոշոր ներդրումների իրականացման նպատակով խրախուսման ցածր մակարդակը:



ՆՊԱՏԱԿՆ Է ՍԱՀՄԱՆԵԼ՝



- Խոշոր ներդրումային ծրագրերի շրջանակը, վերջիններին ներկայացվող պահանջները, խոշոր ներդրումային ծրագրերին տրվող պետական աջակցության (օժանդակության) համակարգային մոտեցումները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ՀԱՄԱՐԿՈՒՄ ՀՀ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՅՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝

- որոնցում կատարված ներդրումների ծավալը կազմում է առնվազն **5 միլիարդ դրամ**, մտավոր սեփականության արժեքների ներդրման դեպքում դրանց չափը չի կարող գերազանցել ընդհանուր ներդրումների ծավալի **20 տոկոսը**,
- որի իրականացման արդյունքում ստեղծվում է առնվազն **10** մշտական աշխատատեղ,
- որի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել **5 տարուց**, իսկ ներդրումների կատարման ժամկետը չի կարող գերազանցել ծրագրի գործողության ժամկետի **60 տոկոսը**:



Խոշոր ներդրումային ծրագրեր իրականացնող ներդրողները կարող են ստանալ պետական աջակցություն (օժանդակություն) ներդրումային ծրագրի իրականացման նպատակով դիմելով լիազոր մարմնին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՐՈՂԸ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐՆ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ՝

- ծրագրի անվանում, նկարագիր,
- ֆինանսական կանխատեսումներ և ցուցանիշներ,
- ծրագրի իրականացման փուլեր/ժամանակացույց,
- ռիսկերի գնահատում, սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատական,
- պետությունից ակնկալվող աջակցություն,
- ծրագրի իրականացման վայրի մասին տեղեկություն, այդ թվում՝ հողամասի/գույքի վերաբերյալ սեփականության իրավունքի, կադաստրային ծածկագրի, հողի նպատակային նշանակության, մակերեսի վերաբերյալ,
- տեղեկանք փաստաթղթերի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի հողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ:



Խոշոր ներդրումային ծրագրերի իրականացմանը պետական աջակցության տրամադրման հարաբերությունները պետք է կարգավորվեն ներդրողի և իրավասու մարմնի միջև կնքված պայմանագրով, որով կողմերի համար սահմանում է ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար հիմնական պայմաններ (ծրագրի իրականացման ժամկետ, առարկա, իրավունքներ ու պարտավորություններ և այլն):





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ (ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԻ՝

Հաշվետվություններ՝ կազմված և հաստատված հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից թողարկված հավաստիացման միջազգային **3000** ստանդարտի (ISAE) համաձայն:

Եզրակացություն՝ թողարկված **400 մլն դրամ** և ավելի տարեկան շրջանառություն ունեցող առևտրական կազմակերպության կողմից, որը վերաբերում է բացառապես այդ առևտրական կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությանը՝ չներառելով խմբի կազմակերպություններին:

Ներդրումային ծրագրի իրականացման ապահովման միջոց-երաշխիք (օրինակ՝ գույքի գրավադրում, բանկային երաշխիք և այլն):



ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ (ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ) ՁԵՎԵՐԸ

1. ՀՈՂԱՄԱՍԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

- պետական կամ համայնքային հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով,
- ուղղակի վաճառքի միջոցով,
- վարձակալության, կառուցապատման տրամադրման միջոցով,
- գույքի օտարման ձևով,
- հանրային գերակա շահ ճանաչելու միջոցով:

2.

- հարկային արտոնություն
- մաքսային արտոնություն
- ենթակառուցվածքի կառուցում

3.

- Այլ աջակցություն, որը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԺԱՄԿԵՏՆԵՐ

- ✧ Ծրագրի իրականացման ընթացքում՝ Ծրագրի ժամկետի մեկնարկի մեկ երրորդը լրանալու ավարտից հետո եռամսյա ժամկետում Իրավասու մարմիններ կայացնել նախորդ տարիների ընթացքում Ծրագրի իրականացման վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում լրացուցիչ այլ տեղեկություն, իսկ Ծրագրի ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում վերջնական աուդիտորական հաշվետվություն:
- ✧ Ծրագրի մեկնարկից սկսած յուրաքանչյուր տարվա ավարտից հետո երկամսյա ժամկետում ներդրողը Էկոնոմիկայի նախարարություն՝ Լիազոր մարմին, Պատասխանատու մարմին (օրինակ՝ համայնք) և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ ներկայացնում է կատարված աշխատանքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՁ

Հաշվետվությունները պետք է կազմված և հաստատված լինեն հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից թողարկված հավաստիացման միջազգային **3000** ստանդարտի (ISAE) համաձայն եզրակացություն՝ թողարկված **400 մլն դրամ** և ավելի տարեկան շրջանառություն ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից:

ՀԱՎԱՍՏՈՒՄ ԵՆ

Հաշվետվությունները պետք է հավաստեն ներդրողի կողմից ծրագրի իրականացման նպատակով կատարված ծախսերը և աշխատանքների ծավալները:

ԿԱՐԳ

Ծրագրերի և դրանցով նախատեսված առանձին ցուցանիշների մշտադիտարկման մեխանիզմների կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է՝

- Ծրագրի չկատարում է համարվում ներդրումային ծրագրով նախատեսված ֆինանսական և ոչ ֆինանսական (շենք - շինություն կառուցում) ցուցանիշներից բացասական շեղումը, ընդ որում ոչ ֆինանսական ցուցանիշներն ապահովելու դեպքում ֆինանսական ցուցանիշների համար հիմք ընդունելով վերջնական հաշվետվությամբ Լիզոր մարմնի կողմից հաստատված արժեքը, կարող է շեղվել բացասական ուղղությամբ առավելագույնը **20%**:
- Ներդրողը պատասխանատվություն է կրում պայմանագրի գնի վճարման ժամկետի խախտման համար, որի դեպքում վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ կետանցի օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ համապատասխան ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով:
- Վճարման ժամկետն ավելի քան **180 օր** ուշացնելու դեպքում Իրավասու մարմնին իրավունք է վերապահվում լուծելու պայմանագիրը:
- Մինչև պայմանագրի լուծման պահը Ներդրողի կողմից վճարված գումարները չեն վերադարձվում:
- Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

 secretariat@mineconomy.am

 www.mineconomy.am

ԵՐԵՎԱՆ 2025



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ